Ազնուամեծապայծառի և գերյարգեցելագունեղի
Հօրդ իմում Աբբայի

Բազմաւ կարօտական սիրով և ողջունիւ յայտ լիցի վերոյ գրեցելոյ Վեհանձնութեանդ... ուրախա[ցա]յ վասն առողջութեան վեհանձնութեանդ, ես այլոց անձանց միաբանից, և վասն աջողութեանց չինուածոց եզերեցմանց...։ Նոր էլչին յուլիսի 30 *գնաց ի սարայն, և հինն ի յայլ տեղիս. ոմանք ասեն չուտով ելանէ և ոմանք ասեն մէկ ամսոյն եա ելանէ.... ։... ահա ծանիր ի կողմանէ պատերազմին, զի տաճիկքն հրաման հանեալ հրէյիցն, զի ելեալ բազմութեամբ զամին ասասցեն շրջագայելով յաստ և յանդ. նաև երբեմն երբեմն ի տօլմա պաղճան և ի յօթ մէյտանն գնացեալ բազմութիւնք տաճկաց և հրէյից ի գիշերին մինչև ի լոյս աղաղակէին, և խնդրէին զյաղթութիւն ինքեանց, և զկործանումն քրիստոնէից, և մինչև ցայսօր անդադար առնեն. այլ և մին անգամ ասելով թէ զթաբուտ նէմցէին առաք, և զինքեանս ձարթեցաք, և բազումս զերեցաք, վասն որոյ այնմ աւուր զբազումս ուրախութիւնս արարին, և զբազումս թօփս արձակեցին երեք անգամ, և ի միւսում աւուր լռեցին, որ պարտ էր երեք օր առնել..., և յայժմ ես անդադար խօսին, և ասեն թէ յայսօր և կամ ի վաղիւն զպէլըղատ ֆէթ կանեմք, և կամ զբանալիքն առնումք, և ապա զըըմշվարն, և այսպէս զզանազան բազումս բանս... ասեն...։*

Նուաստագունեղ ծառայ
Հայր Պետրոս վարդապետ

1739 *յօգոստոսի* 14
[*Կ. Պոլիս*]

ՂԲ.

Թուրք – Աւստրիական պատերազմը հետզհետէ ամենալուրջ երևոյթ մը կ'առնէ։ Մեր նամակագիրը համառօտիւ կը նկարագրէ Պելկրատի աղեխարշ պարպումը հայերէ և «փռանկ»ներէ, ինչպէս նաև Հայոց նաւուն մէջ պատահած խժդժութիւնը։

Գերապայծառ և գերայարգ Աբբա Հօրդ մերում
տեառն տեառն Մխիթարայ վարդապետի

Բազմաւ յարգութեամբ յիսուսեան ողջունիւ յայտ լիցի տէրութեան քում, զի բէլըրգատու եղեալ հայերն մեծ և փոքր, իւրեանց ապրանքն և կանայքն եդին ի նաւն, վասն գնալոյ ի վարատին. ես փռանկաց կանայքն. քանզի քաղաքապետն այնպէս հրամայեաց, նաւերն գնացին գետով, անկարծակի զողք և աւազակ մտանեն մեր հայոց նաւն, մին մարդ կը սպանանեն, մին քանի մարդ այլ չափէն ի դուրս հարկանեն. կանանցն ևս հարկանեն, ասելով թէ փողերդ ինչ տեղ է բերէք յառաջ. վերջապէս թէ փող թէ ապրանք երեսուն քէսի մնաս եղև հայոց. ի կողմանէ պատերազմին, օր ըստ օրէ սաստկանայ, սկսան մեր հայերն և փռանկներն չուել. ես ու ճանէզիզն խորհուրդ արարինք. առի փաչուչ ինձի և փոքրաւորն հետս. գնացինք զէմին. մին սայլ բռնեցինք. ճանապարհին մեծ երկիւղ կրեցինք՝ ի կողմանէ աւազակաց. բայց գոհանամ զաստուծոյ, ամենայնէ փրկեաց զմեզ. զկնի երկու աւուր ճէնէզիզն եկաւ. յոյժ սակաւ մարդ մնաց քաղաքին. կարծեմ եթէ հնար գտանեն՝ նոքա այլ գալոց են. Վարատին մեծ ղալապալըխ եղև. մին օտայ որ հազիւ երկու մարդ նստի, ամիսն երեք ոսկի քիրա. նա այլ դժուարաւ գտուի։ Այլ ես թէ հայք և թէ լաթինք վարիչն բնակին. ոմանք չատըրով. այլ ես մեծ կասկած զոյ թէ տաճիկն պաշարելոց է զքաղաքն. միայն ի ձեռին աստուծոյ մնացեալ է. տեղս քափու-